ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 23

ՀՀ մարզպետի մոտ կայացած խորհրդակցության

13.11.2020թ. **ք.Վանաձոր**

Մասնակցում էին

Գ.Մարկոսյանը - մարզպետի տեղակալ
Ա.Բեջանյանը, Ռ.Հարությունյանը, Լ.Վարդանյանը, Վ.Ղարսայանը, Կ.Աշրաֆյանը, Գ.Մելիքսեթյանը, Ա.Սահակյանը, Է.Հախվերդյանը, Կ.Խառատյանը, Ս.Ղուբաթյանը, Ա.Թումանյանը, Ս.Գրիգորյանը, Հ.Գասպարյանը, Ա.Գասպարյանը- ստորաբաժանումների ղեկավարներ
Լ.Ասլանյանը - մարզպետի խորհրդական
Հ.Այվազյանը - մարզպետի խորհրդական
Ռ.Մարգարյանը - փորձագետ

Օ ր ա կ ա ր գ ո ւ մ՝

1. Աշխատակիցների արձակուրդների ժամանակացույցի մասին
(Ա.Ղուկասյան)

2. Արցախցի ընտանիքների հետ կապված խնդիրների մասին
(Գ.Մարկոսյան)

3. 2019 - 2020թթ. սուբվենցիոն ծրագրերի ընթացքի մասին
(զեկուցողներ՝ Ա.Բեջանյան, Ռ.Մարգարյան)

4. Կրթական պրոցեսի մեկնարկի մասին
(զեկուցող՝ Ռ.Հարությունյան)

5. Առողջապահական համակարգի ընթացքի, խնդիրների մասին
(զեկուցող՝ Լ.Վարդանյան)

6. Համայնքներում սեփական եկամուտների հավաքագրման մասին
(զեկուցող՝ Ա.Բեջանյան)

7. Այլ հարցեր

Հ ա ն ձ ն ա ր ա ր վ ե ց

1. ՀՀ Լոռու մարզպետարանի ստորաբաժանումների ղեկավարներին և բոլոր աշխատակիցներին՝

Մինչև տարեվերջ օգտվել նախկինում չօգտագործված կամ հասանելիք տարեկան արձակուրդներից:

2. ՀՀ Լոռու մարզպետի տեղակալ Գ.Մարկոսյանին, ՀՀ Լոռու մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական վարչության պետի պաշտոնակատար Ա. Բեջանյանին՝

Անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել համայնքների կողմից սեփական եկամուտների հավաքագրման տարեկան պլանային ցուցանիշները ապահովելու ուղղությամբ:

3. ՀՀ Լոռու մարզպետի տեղակալ Գ.Մարկոսյանին՝

Հնարավորության սահմաններում անհրաժեշտ աջակցություն ցուցաբերել Արցախից տեղահանված և գույքի տեղափոխման խնդիր ունեցող քաղաքացիներին տրանսպորտային միջոցներով ապահովելու ուղղությամբ:

3. ՀՀ Լոռու մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական վարչության պետի պաշտոնակատար Ա. Բեջանյանին՝

Սահմանված կարգով և ժամկետներում մրցութային գործընթաց սկսել հանրակրթական դպրոցներում ալկոգելի ձեռքբերման մրցույթների կազմակերպման և անցկացման ուղղությամբ:

4. ՀՀ Լոռու մարզպետարանի քաղաքաշինության վարչության պետի ժ/պ Վ.Ղարսայանին, մարզպետարանի փորձագետ Ռ.Մարգարյանին՝

Ներկայացնել տեղեկատվություն բոլոր սուբվենցիոն ծրագրերի կատարողականների և ավարտական ակտերի վերաբերյալ:

/ժամկետ՝ 5 օր/

5. ՀՀ Լոռու մարզպետարանի հողօգտագործման և հողաշինության բաժնի պետ Է.Հախվերդյանին՝

Եռօրյա ժամկետում ձեռնարկել միջոցներ Զինվորական Պանթեոնի հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու ուղղությամբ և ներկայացնել տեղեկատվություն ու առաջարկություններ կատարված աշխատանքների մասին:

X

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ **Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ**

Արծ. Ա.Այդինյան
Հեռ. 0322 /4-32-99